# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնք, 5-փ 7, Հեռ. 2-42-26 , norik.melkonyan@mail.ru

N 1/201
*26 սեպտեմբեր 2018թ.*

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ է ուղարկվում Ողջաբերդ համայնքի ղեկավարի 2018 թվականի սեպտեմբերի 18-19-ին կայացրած թիվ 31-Ա, 32-Ա և 33-Ա որոշումները:

Առդիր՝ 4 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

*Կատ ՝ Մ. Կարապետյան*
*Հեռ.՝ 098-29-30-10*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ողջաբերդ, 2-42-26, norik.melkonyan@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 սեպտեմբերի 2018 թվականի N 31-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10,11,22.1 կետերի պահանջներով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջով, հիմք ընդունելով Արմիկ Հայրիկի Հակոբյանին պատկանող Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնքի 5-րդ փողոցի թիվ 26 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման դիմումը և այն, որ ըստ համայնքի կադաստրային քարտեզի և տեղում կատարված ուսումնասիրության հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված ցանկում, ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով , չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք,

*որոշում եմ՝*

1.Արմիկ Հայրիկի Հակոբյանին պատկանող Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնքի 5-րդ փողոցի թիվ 26-րդ հասցեի հողամասում ինքնակամ կառուցված S=96.86քմ կիսանկուղը, S=96.86քմ 1-ին հարկը, S=5.67քմ ավը, S=4.37քմ կաթսայատունը, S=3.3քմ պարիսպը, S=48.72քմ ավտոտնակը, S=4.63քմ ծածկարանը, S=36.37քմ անասնաշենքը, S=11.28քմ տնտ. շինությունը, S=12.13քմ հավաբունը համարել օրինական:
2.Հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված S=96.86քմ կիսանկուղը, S=96.86քմ 1-ին հարկը, S=5.67քմ ավը, S=4.37քմ կաթսայատունը, S=3.3քմ պրիսպը կառուցվել են 2001 թվականի մայիսի 15-ից առաջ, ապա նշված ինքնակամ շինությունների օրինականացման նպատակով գումար չի գանձվում:
3.Հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված S=48.72քմ ավտոտնակը, S=4.63քմ ծածկարանը, S=36.37քմ անասնաշենքը, S=11.28քմ տնտ. շինությունը, S=12.13քմ հավաբունը կառուցվել են 2003-2004 թվականներին, ապա ինքնակամ շինությունների օրինականացման նպատակով համայնքի բյուջե գանձել 113580 դրամ:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինամանացման կարգը հաստատելու մասին>> N912-Ն որոշման 13-րդ

կետի համաձայն՝ տեղական բյուջե 60 օրվա ընթացքում վճարումը կատարելուց հետո:
5.Ուժը կորցրած ճանաչել Ողջաբերդ համայնքի ղեկավարի 2018 թվականի հուլիսի 02-ի <<Ինքնակամ շինությունների օրինականացման մասին>> թիվ 22-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

20 18 թ. սեպտեմբերի 18
գ.Ողջաբերդ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ողջաբերդ, 2-42-26, norik.melkonyan@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 սեպտեմբերի 2018 թվականի N 32-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 17-րդ հոդվածի դրույթներով՝

*որոշում եմ*

1. 2018 թվականի սեպտեմբերի 20-ին ժամը 11$^{00}$-ին հրավիրել ավագանու արտահերթ նիստ՝ հետևյալ օրակարգով.
Ողջաբերդ համայնքի ավագանու 2018 թվականի օգոստոսի 21-ի թիվ 25-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

20*18* թ. *սեպտեմբերի* *19*
գ.Ողջաբերդ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ողջաբերդ, 2-42-26, norik.melkonyan@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 սեպտեմբերի 2018 թվականի N 33-Ա

## ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՄԱՐԿՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈԳԱԲԱՐՁՈՒ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 134-136-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 33-րդ, 35-րդ և 37-րդ հոդվածների պահանջներով, խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության 9-րդ մասի 8-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Մարգարի Հովհաննեսի Մարկոսյանի դիմումը և հաշվի առնելով Արթուր Հովհաննեսի Մարկոսյանի՝ առանց ծնողական խնամքի մնալու փաստը, Ողջաբերդ համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2018 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 2 արձանագրությունը՝

*որոշում եմ՝*

1.Անչափահաս Արթուր Հովհաննեսի Մարկոսյանի /ծնված 12.03.2004թ./ նկատմամբ հոգաբարձու ճանաչել քրոջը՝ Մարգարիտ Հովհաննեսի Մարկոսյանին:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

20 18 թ. սեպտեմբերի 19
գ.Ողջաբերդ